

Ամբաս Բիւրօս
Խմբագրութիւն «Փիիհիկ», Ի
Աղեփսանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՅՄԱՆ

ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՑ 25

ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՑ 8

ՓԻԻԿԻԿ

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՆԻԿ Է
Ձեռագիր ԵՏՁՂՊար-
ծուի

ԿՈՎԿԱՍ
ՏՅՐԵԿԱՆ ԲՊԼ. 6
Ազդեր կ'ընդունե-
ուին մասնաւոր
պայմաններով.

Կը ծախուի ՄԷԿ դրօս ողջի

ՇԱՔԱՐԱՐԵՐՔ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1902

ԹԻԻ 15

ԱԶԳԻՆԵՐՈՒՆ ԱԶԳԸ

Մեր Պատ. Բաժանորդները թո՛ղ գիտնան թէ՛ «Փիիհիկ»ը կը հրատարակուի շաբաթ օրերը տեղիս «Հայկական Արախ» միակ հայ տպարանին մէջ, որ եզական է իր գործառնութեանց ու իր առետուրին առողջութեամբը: Այս տպարանին նորակազմ վարչութիւնը, — ինչպէ՛ս նաև նախորդը —, մինչև որ թերթին տպագրութեան ամբողջ վարձքը կանխիկ չը ստանայ, թերթերը վար կը դնէ, չը յանձներ խմբագրութեան, մէկ, երկու, երեք օր:

Արդ, ներկայ «Աղդերուն Ազդ»ովը կուզանք յիշեցնել մեր բազմաչափ կամ անփոյթ բաժանորդներուն — որոնց ոմանց քանիցս դիմած ենք արդէն ու, շատ քիչերէն պատասխան ստացած —, որ փութացընեն իրենց վճարումները, մասնաւորապէ՛ս:

ՉԸ ՅՈՒՍԱՀԱՏԻՆՔ

Մեր ազգը, դարաւոր հալածանքի, հուրի, սուրի, գերութեան, շարդերու և մշտատե բնաջնջումի սարսափին տակ, յաջողած է պահել իր գոյութիւնը, սերունդէ սերունդ կը տակելով իր հաւատքը, լեզուն ու պատմութիւնը. ահա՛ զօրաւոր ապացոյց մը կորովի, նկարագրի ու մաքառող ուժի, զոր իր վրայ ցոյց տուած է և գեռ կը ցուցընէ այս ազգը, հակառակ իր քաղաքական աղէտներուն: Կրնանք ուրեմն, առանց պատրանքի ու յաւակնութեան, հպարտանալ մեր այդ ձիրքերով ու սպասել լաւագոյն, մեր բաղձանաց համապատասխան ու ազատուած ազգերու երամին մէջ. մեզի պատուաւոր տեղ մ'ընծայող ապագայ մը. այդ վարդագոյն ապագա՛ն է որ կը սիրենք ընդհամարել մեր փշուտ ու արիւնոտ ներկային մէջէն:

Սակայն, պահ մը մեր ներքին

կեանքը բերենք աչքի առաջ, և քրն-
նենք անաչառօրէն և առանց կանխա-
կալ կարծիքի, մեր իսկական կացու-
թիւնը, հասկընալու համար թէ պատ-
րաստ ենք այդ երջանիկ ապագային
համար:

Բովանդակ ազգը կրնանք երկու
մասի բաժնել. Մայր-Հայրենիքին և
Արասասմանին հայութիւնը:

Մայր-Հայրենիքը, մեծագոյն մա-
սովը կը հեծէ թուրք բռնակալութեան
ներքև. իսկ միւս երկու մասերն ալ
անգառնալիօրէն կը պատկանին ռու-
սական ու պարսկական պետութ-
թեանց:

Թրքահայաստանի մէջ, գիտենք,
ամեն օր կը գործուին անլուր ոճիր-
ներ, հայ տարրը բնաջինջ ընելու բար-
բարիկ քաղաքականութիւնը կը գործէ
հոն անդուլ անգագրում. գիւղերը կը
հրդեհեն, քաղաքները կը կողոպտեն
ու կ'ամառացընեն, կոյսերը կը լլկեն,
կիները կ'առևանգեն, երկրագործին
թևերը կը կտրեն, վաճառականու-
թիւնը կը խեղդեն, արհեստները կը
մեռցնեն, միտքը կը բանտարկեն,
կ'աքսորեն ու կ'սպաննեն, լուսոյ ա-
ծարները կը փակեն, եկեղեցիները կը
չղծեն, ժողովուրդին արիւնք կը ծը-
ծեն ու կը քամեն, ու, կը շարդեն
ինչ որ հայ է...

Ռուսական Հայաստանի կամկով-
կասի մէջ, եթէ ո՛չ նոյն ձևով, գէթ
նոյն իմաստով կը գործադրուին ճըն-
շունները, քաղաքակրթութեան ամե-
նանորին ձևերուն տակ, եկեղեցական
ու կրթական հաստատութիւնները պի-
տենք թէ ի՛նչ ճնշիչ օրէնքներու տակ
գրուեցան. կովկասի հայերը տնտեսա-
պէս այնչափ յառաջադէմ ու բարե-
կեցիկ, իրենց աղքային ամենափա-
փուկ զգացումներուն մէջ կը տառա-
պին: Իպրոցները կառավարութեան
յանձնուած, թերթերը գրաքննու-
թեան ահռելի ճանկերէն կ'անցնին.

տարիներէ ի վեր արգիւնտուող զոռ-
ժունէութեամբ մ'ապրած ու ամբողջ
հայութեան մտաւոր սնունդ մա-
տակարարած «Հրասարակյական Ընկե-
րութիւն»ը (որուն գոյութիւնը պիտի
չաշունակուէր մեր Մայրաքաղաքին
մէջ¹ . . .) կը փակուի բրտօրէն. ու
այս ամենը քրիստոնէից հայր խաղա-
ղասէր ու ամենազորմած կաթողիկոս-
կայսեր մը վեհափառութեան հովա-
նիին ներքեւ . . .

Անդին, Պարսկահայաստանի մէջ,
լուսամիտ ու երկրին իրական ու կեն-
սական շահերը խորապէս թափանցող
Շահնշահ մը, մասնաւոր արտօնու-
թիւններով ընդարձակ ապարէզ մը
կը բանայ իր հայ հպատակներուն կրթ-
թական ու ընկերային ազգօգուտ ձեռ-
նարկներուն. այսուհետև ամեն Հայ
ազատ է Պարսկաստանի մէջ ապրիլ,
առանց փոքր երկիւզ մ'ունենալու
Իւրդին, Պարսկին կամ Թուրքին
յարձակումներէն, և գործուլ, ինչպէս
կը գործեն Եւրոպայի, Ամերիկայի կամ
Եգիպտոսի մէջ ապաստանած հայերը,
հաւասար իրաւունքներով, իշխող ցե-
ղին հետ, առանց խտրութեան կրօնի
կամ ազգի:

Մայր-Հայրենիքին կէս մը կան-
գուն մնացած վանքերուն մէջ ունինք
որբանոցներ, ուր կը խնամուին ու կը
դաստիարակուին մեր որբերը. քանի
մը վարժարաններ ալ կան, ուր նախ-
նական կրթութեան պէս բան մը կ'ա-
ւանդուի գոնէ: Ուրի՞շ. — Իբաւանները
զրկուած են քանի մ'առաջնորդներ,
Ալլա. Պատրիարքարանի կողմէն ու Բ.
Իրան արտօնագրովը որպէս զի հով-
ուեն հօտը — Աստուած որդրմի այդ
գաւառներուն, եթէ մատաղ սիրող
կուռքեր են հոն զրկուածներն ալ . . .

Կիլիկիոյ մէջ ունինք կաթողիկո-
սական Աթոռ մը, որ 8 տարիէ ի վեր
թափուր է, և որոյ պատկառելի պա-
րիսպներուն ներսը քաշուած, կը սաղ-

մոտէ ալեգարդ Կիրակոս Եպիսկոպոս Պէքմէղճեանը, աւերակներու պահպան բուն: Ու տակաւին կը սպասենք որ ընտրուի նոր Կաթողիկոս մը: Թէ՛ Հայաստանի և թէ՛ Կիլիկիոյ մէջ է՛ր երբեմն որ կային Միաց. Ընկ. վարժարանները, թուով 50: Օսմ. Մայրաքաղաքը նորէն ունի իր հայ վարժարանները, Ազգ. Հիւանդանոցը, Որբանոցները, Եկեղեցիները, նաև Գում-Գարուի Պատրիարքարանը, անբաժանելի Երուսաղեմատնովք. ունի նաև քանի մը վարձուած, ծախուած կամ կաշկանդուած հայաթերթեր, որոնք կը հրատարակեն ամեն օրուան. Պատրիարքարանին յորերը, բնականաբար Բ. Գրան ուղած ձեռովը, ուրիշ ոչինչ...:

Անցնինք հիմայ Արտասահմանը, Եգիպտոս, Պուլկարիա, Ամերիկա. ահա երեք գլխաւոր կեդրոններն ուր հոծ գաղութ մ'ապաստանած է: Իժգոհներու, յեղափոխներու, փախստականներու, գաղթականութիւնը շահագործողներու, բաղդախնդիրներու, խաչագողներու, պարզ արհեստաւորներու բանակ մը բռնած է Հին ու նոր Յամաքները: Հայութեան այս կարգը, ոչ նուազ պատկառելի թուով, այս վերջին 6 տարիներու մէջ կազմուած, ինքզինք ամեն ճնշումներէ ազատ ու միշտ վայրը հաշտ գտնելով, բարգաւաճիլ սկսած է. գաղթային նախնական դժուարութիւններուն յայլթելէ յետոյ, ժամանակ ալ ունի զբաղելու իր ազգով ու զանի շահագրգռող հարցերով: Ամեն կողմէ տեսնուեցաւ տենդոտ շարժում մը, ընկերութիւններ կազմուեցան ու դեռ կը կազմուին մեր որբերը փրկելու. ընկերութիւններ, խնայասիրական, լսարանական ու բարեգործական. թերթերուն թիւը խոտի պէս կ'աճի, թէև ժողովուրդը սրտապնդող թերթերը միշտ կը փնտռուին. ժողովրդային համախմբումները կը յաճախեն, յեղափոխական մարմիններուն

վրայ՝ արմատական փոփոխումի ու դէպի լուսագոյն նկրտումի նշաններ կը նշմարուին: Մեր հարցին քննադատական վայրկենին մէջ ենք հիմայ, և միթիւարական է նշանակել թէ՛ դիտակցութիւնը չ'պակսիր անձուէր ու կորովի կազմակերպութեանց մէջ, որոնք ստեղծուած են յեղափոխութեան սուրբ, վճիտ ու ազատարար գաղափարներմուծելու ու տարածելու հայութեան ընդ որ խաւերուն մէջ: Հետեւաբար, չը յուսահատինք, ընդհակառակի, աւելի յուսալու պատճառներ ունինք Արտասահմանի Հայութեանէն, հերիք է որ անի ըմբռնէ զարգանալու և յառաջդիմելու իր անհրաժեշտ պարտականութիւնն ու օգուտները, հերիք է որ հայ մամուլը — անշուշտ այդ անունին արժանաւորները — լըրջօրէն զբաղի մեր ցեղին բարոյական, մտաւորական, տնտեսական, ֆիզիքական ու մանաւանդ քաղաքական զարգացման ու ազատութեան կենսական հարցերով, որոնց փափագուած լուծումը սակայն կախում կ'ընայ ունենալ մօտ ժամանակի մէջ, արթնցած, զարգացած, գործելու տրամադիր ու հարստացած ժողովուրդի մը բարի կամքէն ու ջանքէն:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԲԱԺԻՆ

Ազսղի մը վրայ տղեկի մ'երազը



Ժամանակաւ տղեկ մը կար որ կը թափառէր միշտ հոս ու հոն ու կը խորհէր շատ մը բաներու վրայ. միակ քոյր մը ունէր որ իրեն պէս մանուկ մըն էր և իր մշտական ընկերք: Ասոնք օրն ի բուն կը սքանչանային. կը սքանչանային ծաղիկներու գեղեցկութեան վրայ, կը սքանչանային երկնքի կապոյտին վրայ, կը սքանչանային պայծառ շուրերու խորունկութեան վր-

րայ ու ամէն գիշեր սքանչանքով կը
գիտէին աստղերը:

Միակ պայծառ պսպղուն աստղ
մը կար, աւելի խոշոր ու աւելի ալուր,
կը խորհէին, քան բոլոր միւսները, և
ամէն իրիկուն անոր կը սպասէին ակն-
դէտ՝ ձեռք ձեռքի կենալով պատուհա-
նի մը առաջը: Ով որ առաջին ան-
գամ տեսնէր զայն, կը կոչէր. «Կը
տեսնե՞մ աստղը:» Ու շատ անգամ եր-
կուքը մէկէն կը կանչէին, ա՛յնքան
լաւ գիտէին անոր ելլելու ատենը եւ
տեղը:

Անկողին մտնելէ առաջ, միշտ ան-
գամ մըն ալ կը նայէին անոր՝ գիշեր-
բարի մաղթելու համար, ու երբ պառ-
կելու դառնային, սովոր էին ըսել.
«Աստուած պահէ՛ աստղը:»

Դեռ մատղաշ մանուկ՝ քուրիկը
այնպէս մը հիւանդացաւ որ այլևս իրի-
կունները չէր կարող կենալ պատու-
հանին առաջը: Այն ատեն տղեկը
միս մինակը կը գիտէր տխրագին, ու
երբ աստղը տեսնէր՝ կը դառնար ու
կ'ըսէր անկողնոյ ծառայող տժգոյն
դէմքին. «Կը տեսնե՞մ աստղը:» Ու այն
ատեն ժպիտ մը կուգար դէմքին վը-
րայ, ու հիւանդ պլտիկ ձայն մը կ'ը-
սէր. «Աստուած պահէ՛ եղբայրս ու
աստղը:» Ու եկաւ ատեն մը, բոլորո-
վին շուտ, երբ տղեկը միս մինակը կը
գիտէր, ու երբ անկողնոյ մէջ ա՛լ չէր
տեսնուեր դէմքը, ու երբ մերձակայ-
քը պտրտիկ գերեզման մը կը գտնուէր
որ առաջ անգոյ էր, ու երբ աւտղը
ցուքեր կ'երկնցներ դէպի տղեկը մինչ
անիկա կը գիտէր զայն արցունքնե-
րուն մէջէն:

Հիմա այս ցոլքերը ա՛յնքան պայ-
ծառ էին և կը թուէին ա՛յնպիսի փայ-
լուն ճամբայ մը յարգարեւ աշխարհէս
դէպի երկինքը որ՝ տղեկը երբ իր մի-
այնակ անկողինը երթար, աստղին վը-
րայ կ'երազէր. ու կ'երազէր որ, իր
պառկած տեղէն, կը տեսնէր հրեշ-

տակներ որոնք այդ շողողուն ճամբա-
յէն շա՛տ մը շատ մը մարդիկ վեր
կ'առնէին: Ու աստղը, բացուելով, կը
ցուցնէր անոր լուսեղէն աշխարհ մը,
շատ մեծ, ուր այդպիսի անթիւ հրեշ-
տակներ կը սպասէին զանոնք ընդու-
նելու: Ոմանք իրենց կեցած նրկայն
շարքերէն ընդառաջ կուգային ու կիյ-
նային մարդոց պարանոցին վրայ, կը
համբուրէին զանոնք խանդաղատան-
քով, ու անոնց հետ միասին կ'երթա-
յին լուսափայլ նրբանցքներն ի վար,
և շատ երջանիկ էին անոնց ընկերակ-
ցութեամբը:

Բայց կային հոն շա՛տ մը շա՛տ մը
հրեշտակներ որ անոնց հետ չէին եր-
թար և որոնց մէկէն մէկը ծանօթ էր
իրեն: Հիւանդագին դէմքը որ երբեմն
անկողնոյ կը ծառայէր, փառապսակ
ու լուսափայլ էր. բայց իր սիրտը
ճանչցաւ իր քուրիկը բովանդակ խուճ-
բին մէջէն:

Իր քրոջ հրեշտակը աստղին մուտ-
քին շուրջը կը դեգերէր ու կ'ըսէր
ժողովուրդը հոն բերողներու առաջ-
նորդին. «Եկա՛ւ եղբայրս,» ու ասիկա
կ'ըսէր. «Ո՛չ:» Յուսալից կը վերա-
դառնար նէ՛ երբ տղեկը կ'երկնցնէր
իր բազուկները, և կը գոչէր. «Քու-
րի՛կ, ահաւասիկ եմ, զի՛ս ալ առ,» և
այն ատեն նէ՛ դարձուց իր բոցեղ աչ-
կունքը անոր վրայ, ու գիշեր էր եւ
աստղը սենեակին դէմը կը պսպղար,
ցուքեր երկնցնելով դէպի տղեկը՝ մինչ
անիկա կը գիտէր զայն արցունքներուն
մէջէն:

Մեծցաւ տղամարդ եղաւ մանու-
կը, ու իր գրքերուն վրայ մտազբազ
էր, երբ ծերուկ մը եկաւ ու ըսաւ ի-
րեն. «Մայրիկդ ո՛չ ևս է, կը բերեմ
քեզ ներս օրհնէքը իր սիրասուն զա-
կին վրայ:» Գիշերը դարձեալ տեսաւ

աստղը և բոլոր այդ նախկին խումբը, ու իր քրոջ հոգին վերստին ըսաւ առաջնորդին. «Եկա՛ւ եղբայրս,» և անիկա ըսաւ. «Մայրիկդ:» Ուրախու թեան հզօր աղաղակ մը թնդաց ամբողջ աստղին մէջ, վասն զի մայրը վերստին միացած էր զաւկին հետ: Ու տղամարդը երկնցուց իր բազուկները և կոչեց. «Մայրիկ, քոյրիկ, ահա ահիկ եմ, զի՛ս ալ առէք:» Ու անոնք բռին. «Ո՛չ դեռ,» և աստղը կը պըսպըզար:

Անիկա մեծցաւ և եղաւ մարդ մը, որուն մազը մսխրի կը զարնէ, եւ կը նստէր աթոռին վրայ կրակին քովիկը, վշտով ծանրաբեռն, երբ աստղը անգամ մըն ալ բացուեցաւ. «Եկա՛ւ եղբայրս,» հարցուց իր քրոջ հրեշտակը. «Ո՛չ, պատասխանեց առաջնորդը, այլ իր աղջիկը:»

Եւ մարդը որ մանուկ մըն էր, տեսաւ իր աղջնակը, իրմէ դեռ նո՛ր թռած, իր սիրելիներուն մէջ, և ըսաւ. «Իմ աղջնակիս գլուխը քրոջս գրկին մէջն է և բազուկները՝ մօրս պարանոցին բոլորը, կրնամ դիմնալ ներա ինձ մէ բաժնուելուն: Փա՛ռք քեզ Աստուած:» Ու աստղը կը պսպղար:

Այսպէս մանուկը ծեր մարդ մը եղաւ, իր գէճքը կնճիւններ ունէր, իր քայլերը՝ գողգոլուն և ծանրաշարժ, և ետեւը՝ կորաքամակ: Ու գիշեր մը մինչ անկողինն էր, իր տղաքները շուրջը, գոչեց, ինչպէս ըրած էր տարիներ առաջ, «Կը տեսնե՛մ աստղը:»

Անոնք փսփսացին իրար. «Կը մեռնի կոր:» Եւ անիկա ըսաւ. «Այո՛, տարիքս կը թօթափի վրայէս ինչպէս պատմուճան մը ու ես գէպի աստղը կը շարժիմ տղեկի մը պէս: Հա՛յր իմ, շնորհակալ եմ քեզմէ որ ասիկա քանիցս բացուեցաւ հիւրընկալելու համար իմ այն սիրելիներս որ ինձ կը սպասեն:»

Ու աստղը կը պսպղար, և կը պըսպըզայ անոր գերեզմանին վրայ:

ՏԻՔԸՆՍ

Թարգմ. Արմէն Գնունի

ՔՐՈՆԻԿ

— Մակեդոնիոյ Ապստամբութիւնը կամաց կամաց կը տարածուի ու քիչ ատենէն պիտի ընդհանրանայ: Սարսափներու, ոճիրներու և խժգժանքներու նոր տեսարան մը պիտի պարզուի մօտերս այդ երկրին մէջ, որ ամեն կողմէ կողոպտուած ու թալլուած, երկու կրակներու միջև կը գտնուի այսօր: Կացուցիւնը կը դառնայ ա՛լ աւելի սպառնալից. թշուառութիւնը ծայրագոյն աստիճանը գըտաւ. մշակները չ'են ուզեր աշխատիլ արտերը, որովհետեւ կը վախնան թէ պիտի չը կրնան հնձել: Առուտուրը կեցաւ, տագնապը կը ծանրանայ օր օրի վրայ: Գիւղերը, գրեթէ ամբողջութեամբ հրդեհեցին. բնակիչները, սարսափած, տեղերնին կը թողուն կը փախչին թէ՛ ապստամբներուն, թէ՛ կանոնաւոր զօրագնդերուն առջևէն ու լեռները կը քաշուին:

Ապստամբները կը ստիպեն գեղացիները զէնք առնել իրենց հետ: Ու եթէ այս խեղճերը յանդըգնին զէնք չ'առնելու, տներնին կրակի կը տըրուի. այս կերպով հրոսախմբերուն թիւը կը շատնայ օրէ օր:

Սելանիկի նահանգին մէջ 4, իսկ Իսքիւպի, Մանասթըրի ու Գօսովայի նահանգներուն մէջ գրօշի տակ առնուեցան 12ական պահեստի վաշտեր, ընդ ամենը 40000 մարդ, որոնք արդէն զրկուած են Մակեդոնիա, «կարգը վերահաստատելու» համար: Ասոնք վաղը պիտի այրեն ամեն բան, տուն, եկեղեցի, դպրոց, շուկայ, ագարակ, ինչ որ կանգուն թողուած պիտի ըլ-

լայ Մակեդոնական դոմիթէներուն կողմէն:

Քանի մ'որ առաջ նշանը տրուած ապստամբական շարժումը վարողն է պուլկար բանակէն վաղեմի գնդապետ մը, որ կը կոչուի Եանգօֆ. այս գընդապետն իր տրամադրութեան տակ ունի 3000է աւելի զօրք, զանազան խմբերու բաժնուած: Առժամեայ կառավարութեան պաշտօնները վարող Գոմիթէն կը շարունակէ իր գործը: ան է որ կը վարէ ապստամբական գործը պուլկարէնէն Քասթորիայի, Վօտէնայի, Կէօկէլիի ու Նէկէնայի գաւառներուն մէջ:

Հեռագրական հազորդակցութիւնները կտրուեցան շատ մը տեղեր, նոյնպէս կեցաւ երկաթուղիով երթևեկը:

Շիպթայի հանդէսներուն առաջ բերած յուզումը, նաև Մակեդոնական դոմիթէին բանած ընթացքը, որ կը պառնայ ընդհ. յեղափոխութիւնը խրմորել, Գրաց վճռել տուին ձեռք առնել ամեն կարևոր զգուշութիւններ:

Ու այս պահուս Օտմ. պաշտօնական շրջանակներուն մէջ նմանը չը տեսնուած խուճապ տագնապ մը կը տիրէ...

— Շիպթայի մարզակներէն ետքը տրուած հացկերոյթին մէջ, Իկնաթիէֆ գօրավարը, որ գեղակչիտ գերը խաղացած ըզլալ կը թուի այս տօներուն մէջ, ճառ մ'արտասանեց, որ կը վերջանար այս բառերով. «Պաշկարիան, երկրին վեհապետին խեղացի սևօրինոքեան, հաշրեհասեր ու հասսասուն կառավարութեան մը, ու Ռուսիոյ հզօր պաշտպանութեան ներքեւ կրնայ մեծ ապագայ մը ապաստել:»

Նոյնպէս շատ մեկնութիւններ ու կարևորութիւն տրուեցան խօսքերուն, զորս կոմս Իկնաթիէֆ ըսաւ Սօպրանիէի փոխ-նախագահին. «Դո՛ւք համերաշխ և ղի՛ք ներսը, մի՛ վիճարանիք քաղաքակրթեան վրայ, կրնաք

ա՛յն ասէն վստահ ըլլալ թէ՛ Ռուսիան պիտի մեզ չը շփէ:»

— Կ. Պոլսէն կը գրեն «Կազէթ տը Ֆրանֆօրի» թէ՛ պատերազմական նախադրութեան մէջ տենդոտ գործունէութիւն մը կը տիրէ, ձմեռէն առաջ, ալէկ մը զօրացնելու գործօն բանակին 215 վաշտերը, ո՛ր կը գրտնուին Սելանիկի, Մանասթրիի ու Գօսովայի նահանգները:

— Պաշկարիա. — Մակեդոնական յեղափոխութեանը բերան Ռէժօրմ թերթը կոչ մ'արձակեց բոլոր Մակեդոնացիներուն, հրաւիրելով զանոնք որ զէնք առնեն Մակեդոնիան, օսմանեան լուծէն ազատելու նպատակով ու իրենց գլուխը գնելու Եանգօֆ գընդապետը: 11 գաւառներ կուրի մէջ են հիմայ:

— Տեղիս Ազգ. Պողոսեան Երկ. Վարժարանին նոր Տնօրէնը, Տիար Յակովբ Աստուշեան ամսոյս 2ին հինգշաբթի իրիկունը ռուսականով Տբապիղոնէն քաղաքս հասաւ իր Տիկնոյ հետ, ո՛ր նմանապէս վկայեալ ուսուցչուհի մըն է:

Երկու աշակերտներն ընդունելու, արձանագրելու և քննելու նախական գործողութիւններն արդէն սկսած են ամսոյս 6ին, երկուշաբթի, և առաջ կը տարուին ամեն օր, շաբթուան ընթացքին մէջ: Ուսուցչական մարմինը կը լսենք թէ կազմուած է գրեթէ ու վարժարանին բացումը պիտի սկսի յառաջիկայ երկուշաբթի 20ին:

Պատ. ծնողներուն կը մնայ փութալ զրկելու իրենց զաւակները հօն, ուր կը յուսանք թէ պիտի տրուի մասաղ սերունդին զուճարգայիլ առողջ գաստիարակութեան մը հետ՝ դարուն ու միջավայրին պահանջները լրացընող մտաւորական սնունդն ու կրթութիւնը:

Քէ այս բոլորը կրնանք իրագործուած տեսնել, եթէ Տնօրէնը միսմինակ չը թողուի կարգ մ'անփորձ թէ

և անձնուէր ուսուցիչներու հետ, էթէ Տնօրէնը շրջապատող ուսուցիչներն ըլլան ո՛չ միայն խղճամիտ ու գործուն, այլ նաև ու աւելի՛ փորձ ու ձեռնհաս, ատակ՝ իրենց վստահուած ո՛ր և է ճիշդ աւանդելու: մէկ խօսքով, եթէ Պատ. Հոգաբարձութիւնը մինչև վերջը վառ պահէ իր եռանդը, զոր պաշտօնի կանչուած օրէն մինչև ցարդ չէ՝ դադրած պարզելէ:

— Վարէնիին Ալբանիոյ վրայ խիստ շահեկան թղթակցութիւն մը հրատարակած է Հոկտեմբերի թիւին մէջ: Այդ թղթակցութեան վերջին տողերը կը թարգմանենք միայն մեր ընթերցողներուն համար.

«Շատ մ'աղբաներէն բառեր հայերէնի սերտ նմանութիւն ունին, զոր քիչ մը սովրած եմ Պեռլին: ՄԻՍ կը նշանակէ՝ միտ. ԿԱՄ՝ կը նշանակէ կայծ կա՛ւ կրակ, եւն: Խորհուրդ կուսա՛ւ ձեր հայրենակիցներուն՝ ուսանիչ աշխան ցեղիկ ծագուելը: Այս ուսուցիչ քերտու գիրենկ առաջնորդէ կարելոր գիտերու:»

— Տիար Ժ. Տօրիս, Abd-Ul-Hamid intime (ի հեղինակը, նոր գիրք մը հրատարակեց, ԹՈՒՐԿ ԿԻՆԸ, խիստ շահեկան երկ մը, ուր համակրելի հեղինակը խղճահար, անկողմնակալ ու խորթափանց միտք մը կը յայտնուի:

— Էնիս Բաշան, Հալէպի տիրահրոշակ կուսակալը, Տիգրանակերտի, մէջ, 1896ին իր սարքած շարգերովը վերջապէս պաշտօնէն հանուած է, Թրանսայի, Անգլիոյ ու Աւստրիոյ դեսպաններուն թախանձանքին վրայ. յաջորդն է Մեհմետ Ելեհեհին, Հաւրանի բաղնիստը ու մնեցողներուն նախկին քննիչը:

— Պ. Կերասիմ Թումանջեան, որդի Պ. Յովսէփ Թումանջեանի որ վերջերս մեռաւ ի Բաքու, 10000 ռուբլի նուիրած է հիմնարկութեանը համար ասպարանի մը, որ Պարսկաստանի եւ Հնդկաստանի Հայոց Առաջնորդին տրամադրութեանը տակ պիտի դրուի:

— Վեկեսկոյ Միխրարեանի հրատարակեցին սղբացեալ Հ. Ալիշանին Հայաստանում հոյակապ յետ մահու երկը, որ կը պարունակէ քաղուածներ բոլոր հայ պատմիչներէն, և որ անհրաժեշտ է Հայաստանին անցեալն ուսումնասիրելու համար: գինը 50 ժր:

— Վսեմ. Պօղոս Բաշա Նուպար այս անգամ անկեղծօրէն հրատարած է Նախագահութենէն Տեղիս Խնամակալութեան, զոր նորին Վսեմութիւնը կազմած էր հլու աշխատակցութեամբ մեր ալեզարդ Ս. Առաջնորդին:

Առածը կ'ըսէ. Էստ է անագան քան երբէք: Այս հրատարականը կուգայ թանկ հանել սրտերը Խնամակալութեան անգամներէն անոնց որոնք ո՛չ թէ ժողովուրդի քուէներուն, այլ կամայականութեան ուժովը բազմած են իրենց այնքան սիրած աթոռներուն վրայ և անոնց, որոնք իրենց ստացած ստուարութիւ քուէներուն փոխարէն, ընտրողներուն հաւաքական կամքը ծաղրեցին ու իրենց Խնամակալի ըզրովը կը կարծեն պաշտպանել շահերն ու վարել գործերը հասարակութեան հը, որ կը փափագէր թաղականի աթոռին վրայ տեսնել զիրենք:

Այգային իշխանութեան այս տառանեալ ու անկերպարան կացութեան հանդէպ մեր Ս. Առաջնորդը չը մտածեր արդեօք թէ կեանքին մէջ լաւագոյն բանն ըրած պիտի ըլլար, եթէ ինք ալ, հետեւելով իր տիրոջ, Վսեմ. Պօղոս Բաշային յանձնարարելի ընթաց-

քին, կանխէր հրաժարիլ պաշտօնէ մը, որուն մէջ, ինք մենէ լաւ դիտէ, գերազանցօրէն յայտնուեցաւ իր անճարակութիւնը:

— Ազատ խօսիին զբօսասէր ընթերցողները ճորդ թիւը տեսնելէ ետք, բնական է թէ՛ տեղուտութեամբ կ'ըստպասեն ճորդ թիւը, որ հրատարակուեցաւ, սրախօսութեանց սքանչելի հաւաքածոյ մը:

ՀԱՄԱՃԱՐԱԿԸ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ

Հոկտ.	Բռնուած	Մեռած
5	12	11
6	11	9
7	12	9
8	12	9
9	9	6
10	5	3



Երիտասարդ մը, որ քաջ Անդրիազէտ է, պատրաստ է մասնաւոր դասեր տալ անգլերէնի, տուներու մէջ ալ, խիստ զսէպուցիչ եւ դիւրամատչելի պայմաններով:

Փափագողները դիմեն Փիւնիկի խմբագրութեան:

« ԱՐԱՔՍ »

Հայկական տպարանը թէ՛ հայերէն, թէ՛ գաղղիերէն և թէ՛ ուրիշ լեզուներով ամեն տեսակ տպագրական գործեր կը կատարէ մեծ խնամով եւ, ինչ որ նուազ կարեւոր չէ, խիտ ջԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ:

SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Ապահովագրական Ընկերութիւն ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Իրամագլուխ 3,125,000 ֆրանգ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Ծովային, Գետային և Ցամաքային փոխադրութեանց արկածներու դէմ:

Իւրամատչելի գներ և պայմաններ

Իիմեյ առ Ընդհանուր Գործակալ ևր Լիւզօր-Փոխանորդ

ՄԻՂՐԱՆ ԳԱԼՖԱՆԱՆ

Աղեփասնորիա, պզտիկ Մեհշիէ Ապուսարսա փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Ծովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Իրամագլուխ 5,000,000 ֆրանգ